ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/05 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «13» մարտի 2022թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ս.Բոշյան, Ն.Մուխսյան,

Բացող անդամներ՝ Ա.Ղուրշուդյան, Ա.Բոշյան

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի բացման մասին

Գ.Բոշյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 4 /չորս/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 2 hvarlen@mail.ru
2	«ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Շահազիզի 35 khoveyan@gmail.com
3	«ՀԱԼԴԻ Քոնսթայլ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8 info@haldi.am
4	«ՄԱԼԿ» ՍՊԸ	ք. Գյումրի Տիգրան Մեծի 1 malkgroup@yahoo.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

2.1) «ՀԱԼԴԻ Քոնսթայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է՝ մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի, հանձնման-ընդունման, հարկային հաշիվների պատճենները՝ հրավերի 2.4.1 կետի պահանջները:

2.2) «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է՝

ա) մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի, հանձնման-ընդունման, հարկային հաշիվների պատճենները՝ հրավերի 2.4.1 կետի պահանջները:

բ) Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը հավաստող փաստաթղթերը՝ հրավերի 2.4.2-ի պահանջները:

2.3) «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է՝

ա) մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի, հանձնման-ընդունման, հարկային հաշիվների պատճենները՝ հրավերի 2.4.1 կետի պահանջները,

բ) Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը հավաստող փաստաթղթերում ներկայացվել են արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն մասնագիտությամբ, ինժիներ-շինարարի որակավորման երկու մասնագետներ, այն ինչ հրավերի 2.4.2-ի կետի ա/ ենթակետի համաձայն ինժեներատեխնիկական անձնակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 1 /մեկ/ ինժեներ-տրանսպորտային ոլորտի՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով՝ համապատասխան փաստաթղթերով:

Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն մասնագիտությամբ, ինժիներ-շինարարի որակավորմամբ մասնագետները չեն կարող համարվել տրանսպորտային ոլորտի ինժեներներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3) Հիմք ընդունելով վերը նշվածը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «ՀԱԼԴԻ Քոնսթայլ» ՍՊԸ-ին, «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին, «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել բոլոր անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակիցների ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 15-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ս.ԲՈՇՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
		Ա.ԲՈՇՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ